զհաւատն։ Արանց ևս թէ հայոց, թէ հոռմոց և թէ հրէից սահմանեցաւ, զի ի բաղանիս չընկրուտախ ունիցին յոտս, կամ ի բազուկսն առ ի զանազանիլ ի տաճկաց. և այժմ որք ի բաղանիս գնան, չնկուտախս կապեն. ասի թէ այս սահման ի ստամպոլ էֆէնտիէն է, և ոչ ի թագաւորէն։ Վասն զի այժմ եղաւ նոր ստամպոլ էֆէնտի մի, որ յոյժ ռիկօոզօ է. և զամենայն ինչ ի կարգի և ի չափու եդ. և ամենայն պակաս կշիռք բարձան, և ամենայն խարդապանք դողան, զի զբազումս պատժեաց և պատժէ. մինչև և սպէչիարք ֆռանկաց ի խալաթիայ՝ դողան։...

1759 Նուաստ ծառայ
Նոյեմբերի 3 Հ. Զաքարիայ Վ. Ա.
[ի Կ. Պոլիս]

ՄԻԵ.

Հայ Կաթ. Նուիրապետութեան պատմութեան համար կարևոր վաւերաթուղթ մ՝է այս, յորում կը ծանուցանէ նամակագիրը, թէ ինչպէս ինքը Ս. Ժողովքէն Վիքար կ՝ընտրուի և իրեն կը հաղորդուի և թէ ինչ հակառակութիւններ կը յարուցուին։

Գերաբարձար և գերյարգելի տեառն տեառն Հայր Մկրտիչ վրդ.ին մատուցցի ողջոյն

... կարծեմ թէ լուեալ իսկ ես զընտրողութենէ իմոյ անձինս ի մեծաւորութիւն հայոց ուղղափառաց ի սուրբ ժողովոյն։ Սակայն կամիմ սակաւուք պատմել քեզ՝ զի իրազեկ լիցիս ամենայնի։ Յայսմիկ ամի ի սկիզբն սեպտեմբերի ես գտանէի ի սամաթիա. և զՌ անձինս յղէ առ իս Վլասիոս եպիսկոպոսն՝ և ստիպմամբ յոյժ զիս կոչէ ի թարապիա։ Եւ ես յետ աւուրց առեալ ընդ իս զանտոն վ. և զսահակ վ. գնամ ի թարապիա։ Եւ եպիսկոպոսն չկամի զնոսա կոչել ի ներքս, այլ զիս միայն. և փակէ զդուռն։ Եւ հանէ զտէքրէթ մի սրբոյ ժողովոյն ի լատին լեզու և ասէ. սիրելի եղբայր. սուրբ ժողովն զքեզ հայոց ուղղափառաց վիքար է կացուցեալ ևն։ Ընդ որ ես հիանամ թէ զիա՞րդ կարելի է այս այսպէս լինիլ։ Վերջապէս խորհուրդ արարաք ի միջի՝ վաղվաղ յականջս բազմաց չարծարծել՝ զի մի՛ ի թշնամեաց վնաս ինչ աճապարեսցէ ի վերայ։ Դարձայ ի թարապիայու, և եկի ի պէպէք, և նստայ անդէն զաւուրս 11. և իջի ի տուն և խօսեցայ ընդ փատրի ռաֆայէլին՝ որ նախ գիտակ էր սոյն տէքրէթիս և նա սիրով շնորհաւորեաց։ Եւ ես վաղվաղ դարձայ ի պէպէք. և յերկրորդ գալստեան իմոյ՝ յորժամ եկի ի տուն... զայնքան բարուրանս բարդեալ են ի վերայ իմ, թէ փաթէրայք և թէ այլք, և նիւթս ինքնագիւտս և բանս ընդ որս սքանչացայ և չկարէի տալ պատասխանի։ Եւ ի գալ ի տուն Վլասիոս եպիսկոպոսին աննման փաթէրայք զայնքան իրս մատուցեալ են ի գլուխ նորա, մինչև և սաստիկ հաւատացեալ՝ առաջին թշնամի ինձ եղեալ է ոչ միայն բանիւ այլ և գրով։ Եւ քան զայս աւելի աւաղելի՝ զի մինչ թշնամիք կամէին և ձկտէին յինէն զայս թիթօլօս ամենևին բառնալ՝ վօյվօտան չկարելով զպարտս իւր տարեկանս վճարել՝ խնդրեալ է ի ձեռն տէֆտէրտարին ի վէզիրէ զմին ֆէրման. զի կարասցէ ըմբռնել զհայս ուղղափառս՝ որք մտանեն յեկեղեցիս լատինացւոց՝ և տուժել զնոսա։...

գրեցաւ ի պէկօղլի Տրուպ ծառայ
1759 ի Նոյեմբ. 15 Աթանաս արեղայ և անարժան եպիսկոպոս

ՄԻԶ.

Դամասկոսի մէջ տեղի ունեցած երկրաշարժի մը տեղեկութիւնը և տաճիկ առասպելի մը գոյութիւնը կը հաղորդուի։